ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2016թ. N-----Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 23-ի հ.451-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ քանդման ենթակա 4-րդ կարգի վթարային Տիգրան Մեծի պողոտայի հ.47 շենքի բնակիչներին վերաբնակեցնելու նպատակով (համաձայն հավելվածի) անհատույց օտարել (նվիրել) բնակարաններ՝ Շինարարների փողոցի հ.15 և հ.6/1 հասցեներում գտնվող նոր կառուցված շենքերից։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ներկայացվող նախագծով նախատեսվում է Շինարարների փողոցի հ.15 և հ.6/1 հասցեներում գտնվող նոր կառուցված բնակելի շենքեր վերաբնակեցնել Երևան քաղաքի Տիգրան Մեծի պողոտայի հ.47 շենքի 4-րդ կարգի վթարային շենքի բնակիչներին՝ համաձայն հավելվածի։

Որոշման ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ կից հավելվածում նշված քաղաքացիները՝ վտանգելով իրենց կյանքն ու առողջությունը, դեռևս բնակվում են, ինչպես նաև օգտագործում և շահագործում են տարածքներ՝ 4-րդ կարգի վթարային Տիգրան Մեծի պողոտայի հ.47 շենքում։ Այդ շենքը գտնվում է փլուզման սպառնալիքի տակ և անկանխատեսելի հետևանքներից խուսափելու նպատակով, քաղաքացիների հետ կատարված բանակցությունների արդյունքում պայմանավորվածություն է ձեռք բերվել հավելվածում նշված անձանց վերաբնակեցնել և տրամադրել նոր բնակարաններ։

Հարկ է նշել, որ հանրակացարանային շենքերի բնակիչների վերաբնակեցման գործընթացը կարգավորող ՀՀ կառավարության 2009 թվականի փետրվարի 5-ի 172-Ն որոշմամբ հնարավոր չի եղել ընդհանուր հիմունքներով լուծել այս ընտանիքների վերաբնակեցման խնդիրները, քանի որ առկա փաստական հանգամանքները դրա հնարավորությունը չեն տվել և ՀՀ գործող օրենսդրության՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի և Երևանի քաղաքի ավագանու 23.12.2015թ հ.451-Ն որոշման համաձայն անհրաժեշտություն է առաջացել խնդիրը կարգավորել լիազոր մարմնի՝ Երևան քաղաքի ավագանու միջոցով։

Ստորև ներկայացվում է յուրաքանչյուր ընտանիքի անհատական տվյալների նկարագիրը։

Քաղաքացիներ Ռաֆիկ և Կարինե Սարգսյանները հանդիսանում են 4-րդ կարգի վթարային Տիգրան Մեծի պողոտայի հ.47 շենքի հ.12 բնակարանի սեփականատերերը /հիմք՝ 10.04.1996թ հ.18915 սեփականության վկայական/։ Վերջիններիս հետ կատարված բազմաթիվ քննարկումների ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող բնակարանի և փաստացի օգտագործվող կիսանկուղային տարածքի հատվածի դիմաց տրամադրել Շինարարների փողոցի հ.15 շենքից երկու սենյականոց բնակարան։

Քաղաքացիներ Ներսես և Ադելաիդա Սարգսյանները հանդիսանում են Տիգրան Մեծի պողոտայի հ.47 շենքի հ.13 բնակարանի սեփականատերերը /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.25032016-01-0169 վկայական/։ Վերջիններիս հետ կատարված բազմաթիվ քննարկումների ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող երկու առանձին մուտքերով բնակարանների դիմաց տրամադրել Շինարարների փողոցի հ.15 և հ.6/1 շենքերից մեկ սենյականոց բնակարաններ։

Քաղաքացիներ Գագիկ, Հրաչյա, Կարեն Մինասյանները և Սուսաննա Հայրապետյանը /ընդհանուր 4 անձ/ հանդիսանում են Տիգրան Մեծի պողոտայի հ.47 շենքի հ.14 բնակարանի սեփականատերերը /հիմք՝ 20.12.1997թ հ.Ա012732 սեփականության վկայագիր/։ Վերջիններիս հետ կատարված բազմաթիվ քննարկումների ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող բնակարանի և փաստացի օգտագործվող կիսանկուղային տարածքի դիմաց տրամադրել Շինարարների փողոցի հ.15 շենքից երեք հատ երկու սենյականոց բնակարաններ։

Քաղաքացի Հայկ Ավետիսյանը հանդիսանում է Տիգրան Մեծի պողոտայի հ.47 շենքի հ.16 բնակարանի սեփականատերը /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.08062016-01-0189 վկայական/։ Վերջինիս հետ կատարված բազմաթիվ քննարկումների ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել քաղաքացուն սեփականության իրավունքով պատկանող բնակարանի և փաստացի օգտագործվող կիսանկուղային տարածքի հատվածի դիմաց տրամադրել Շինարարների փողոցի հ.15 շենքից երկու սենյականոց բնակարան։

Քաղաքացի Ժորժ Մելոյանը հանդիսանում է Տիգրան Մեծի պողոտայի հ.47 շենքի հ.2 բնակարանի սեփականատերը /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.03042015-01-0083 վկայական/։ Վերջինիս հետ կատարված բազմաթիվ քննարկումների ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել քաղաքացուն սեփականության իրավունքով պատկանող բնակարանի դիմաց տրամադրել Շինարարների փողոցի հ.6/1 շենքից երկու սենյականոց բնակարան։

Քաղաքացի Գագիկ Սիմիկյանը հանդիսանում է Տիգրան Մեծի պողոտայի հ.47 շենքի հ.4 բնակարանի սեփականատերը /հիմք՝ անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման

08.06.2004թ հ.1294065 վկայական/։ Վերջինիս հետ կատարված բազմաթիվ քննարկումների ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել քաղաքացուն սեփականության իրավունքով պատկանող բնակարանի և փաստացի օգտագործվող կիսանկուղային տարածքի հատվածի դիմաց տրամադրել Շինարարների փողոցի հ.15 շենքից երեք հատ երեք սենյականոց բնակարաններ։

Քաղաքացի Վարդ Ամիրխանյանը հանդիսանում է Տիգրան Մեծի պողոտայի հ.47 շենքի հ.27 բնակարանի սեփականատերը /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.12042012-01-0259 վկայական/։ Վերջինիս հետ կատարված բազմաթիվ քննարկումների ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել քաղաքացուն սեփականության իրավունքով պատկանող 2 սենյակից բաղկացած բնակարանի դիմաց տրամադրել Շինարարների փողոցի հ.15 շենքից երկու սենյականոց բնակարան։

Քաղաքացիներ Էսմա Սահրադյանը և Ղևոնդ Տեր –Հակոբյանը հանդիսանում են Տիգրան Մեծի պողոտայի հ.47 շենքի հ.30 բնակարանի օգտագործողները /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.03092013-01-0169 վկայական/։ Վերջիններիս հետ կատարված բազմաթիվ քննարկումների ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող բնակարանի դիմաց տրամադրել Շինարարների փողոցի հ.15 շենքից մեկ սենյականոց բնակարան։

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ քննարկվող դեպքերով բացակայում են Երևան քաղաքի ավագանու 2015թ. դեկտեմբերի 23-ի հ.451-Ն որոշման հավելվածի /ծրագրի/ 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքները, ուստի՝ անհրաժեշտություն է առաջացել, գործող կարգի համաձայն, Տիգրան Մեծի պողոտայի 4-րդ կարգի վթարային հ.47 շենքի բնակիչներին վերաբնակեցնելու համար ընդունելու Երևանի ավագանու համապատասխան որոշում։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարաններն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարաններն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
,,_____,,_____ 2016թ. N_____-Ա որոշում

Ց Ա Ն Կ

ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՊՈՂՈՏԱՅԻ Հ.47 ՇԵՆՔԻՑ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՎՈՂ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ

հ/հ	Անուն Ազգանուն	Վթարային շենքի բնակարանի հասցեն	Կառուցվածքը /սենյակների թիվը/	Տրամադրվող բնակարանի հասցեն	Կառուցվածքը /սենյակների թիվը/	Ծանոթություն
1	Ժորժ Մելոյան	Տիգրան Մեծի պողոտայի հ.47 շենքի հ.2	2 սենյակ	Շինարարների փողոցի հ.6/1 շենքի հ.99	2	
2	Գագիկ Սիմիկյան	Տիգրան Մեծի պողոտայի հ.47 շենքի հ.4	3 սենյակ և կիսա նկուղային տարածք /խանութ	Շինարարների փողոցի հ.15 շենքի հ.133, 135, 142	2 2 2	
3	Ռաֆիկ Սարգսյան Կարինե Սարգսյան	Տիգրան Մեծի պողոտայի հ.47 շենքի հ.12	1 սենյակ և կիսա նկուղային տարածք /խանութ/	Շինարարների փողոցի հ.15 շենքի հ.51	2	
4	Ներսես Սարգսյան Ադելաիդա Սարգսյան	Տիգրան Մեծի պողոտայի հ.47 շենքի հ.13	2 սենյակ /առանձին մուտքերով սենյակներ/	Շինարարների փողոցի հ.15 շենքի հ.85 Շինարարների փողոցի հ.6/1 շենքի հ.109	1 1	
5	Գագիկ Մինասյան Հրաչյա Մինասյան Կարեն Մինասյան Սուսաննա Հայրապետյան	Տիգրան Մեծի պողոտայի հ.47 շենքի հ.14	3 սենյակ և կիսանկուղային տարածք/խանութ/	Շինարարների փողոցի հ.15 շենքի 121, 126, 128	2 2 2	
6	Հայկ Ավետիսյան	Տիգրան Մեծի պողոտայի հ.47 շենքի հ.16	1 սենյակ և կիսանկուղային տարածք/խանութ/	Շինարարների փողոցի հ.15 շենքի հ.77	2	
7	Վարդ Ամիրխանյան	Տիգրան Մեծի պողոտայի հ.47 շենքի	2 սենյակ	Շինարարների փողոցի հ.15 շենքի հ.45	2	
8	Ղևոնդ Տեր-Հակոբյան Էսմա Սահրադյան	Տիգրան Մեծի պողոտայի հ.47 շենքի հ.30	1 սենյակ	Շինարարների փողոցի հ.15 շենքի հ.106	1	